19 փետրվարի 2013 թվականի N 139 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 911-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա», «Գոգավան» անցման կետերի արդիականացում» ծրագրի իրականացման պատասխանատու գերատեսչություններ սահմանելու մասին» N 911-Ա որոշման 4-րդ կետով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա», «Գոգավան» անցման կետերի արդիականացում» ծրագրի իրականացման ժամանակացույցում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) 5.4-րդ կետի 4-րդ սյունակում «14.06.2013 թ.» բառերը փոխարինել «01.08.2014 թ.» բառերով.

2) 6.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

6.1.	Ինժեներական փաստաթղթերը ներկայացնելը ծրագրի գլխավոր շահառուին, ՄԱԶԾ-ի կենտրոնական գրասենյակ և ԵՆԲ՝ հաստատման համար	14.06.2013 թ.	01.07.2013 թ.	

».

3) 6.2-րդ կետի 5-րդ սյունակը լրացնել «500» թվով.

4) 7.3-րդ կետի 3-րդ սյունակում «08.11.2012 թ.» բառերը փոխարինել «22.01.2013 թ.» բառերով, իսկ 4-րդ սյունակում «15.02.2013 թ.» բառերը՝ «20.03.2013 թ.» բառերով.

5) 7.4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

7.4.	Ինժեներական ցանցերի տեղադրման նախագծերի վերանայումը, վավերացումն ու աշխատանքների վերահսկումն ապահովելու նպատակով ընկերության հետ պայմանագրի կնքում և աշխատանքների իրականացում	20.03.2013 թ.	11.01.2014 թ.	71,964.65

».

6) 8.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

8.2.	Ստացված տեխնիկական պայմանների հիման վրա նախապատրաստել մրցույթի փաստաթղթերը և ներկայացնել ծրագրի գլխավոր շահառուին, ՄԱԶԾ-ի կենտրոնական գրասենյակ և ԵՆԲ՝ հաստատման համար	10.02.2013 թ.	20.02.2013 թ.	

».

7) 8.3-րդ կետի 3-րդ սյունակում «01.11.2012 թ.» բառերը փոխարինել «20.02.2013 թ.» բառերով, իսկ 4-րդ սյունակում «15.02.2013 թ.» բառերը՝ «10.04.2013 թ.» բառերով.

8) 8.4-րդ կետի 3-րդ սյունակում «01.04.2013 թ.» բառերը փոխարինել «20.04.2013 թ.» բառերով, իսկ 4-րդ սյունակում «01.11.2013 թ.» բառերը՝ «20.01.2014 թ.» բառերով.

9) 9.2-րդ և 9.3-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

10) 9.4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

9.4.	Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ-ի հետ նախագծման և ինժեներական-շինարարական աշխատանքների կատարման պայմանագրի ստորագրում և աշխատանքների իրականացում	20.04.2013 թ.	20.01.2014 թ.	497,422.20

».

11) 10.2-րդ և 10.3-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

12) 10.4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

10.4.	Յուքոմ ՍՊԸ-ի հետ նախագծման և ինժեներական-շինարարական աշխատանքների կատարման պայմանագրի ստորագրում և աշխատանքների իրականացում	01.04.2013 թ.	11.01.2014 թ.	247,646.30

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ